ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 17 >> 10 2013թ. N: 255-Ա **ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԿՐԹԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ԱՌԱՋԱՑՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱԽՍԵՐԸ ՖԻՆԱՆՍԱՎՈՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.16-րդ կետի «ա» ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեում փոփոխություններ ու վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 1616-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին» թիվ 661-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետը և 3-րդ կետը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ենթակայության հանրակրթական և հատուկ կրթական պետական ոչ առևտրային կազմակերպություններում նվազագույն ամսական աշխատավարձը 2013 թվականի հուլիսի 1-ից 45.0 հազար դրամ սահմանելու հետ կապված՝ 2013 թվականին առաջացող լրացուցիչ ծախսերը ֆինանսավորելու նպատակով՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով հատկացնել 43,721.7 հազար դրամ գումար՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ենթակայության հանրակրթական և հատուկ կրթական պետական ոչ առևտրային կազմակերպությունների հետ կնքել դրամաշնորհի հատկացման պայմանագրեր:
3. Որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լիպարիտ Մարտիրոսյանին:

Ֆ.ՑՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝